

Չարէն (Ննար) ուրանց կը կտրի, կը դառնան, կերթան ուրանց ղուճանդրին (գօրաւար) կը սին թէ հալ ու հեքեաթ իդմլա բան տեսանք, ղուճանդար եդոնց չի հաւտայ, ինք կընկնի օրտուի յառէջ ու իզին կիտայ օր բասխուն տան վըր մեր գեղին, Ղուճանդար օր կը մտնի էլի մըր սինօր, ինքլէ կը տեսնի բայրղներ, համա ասքրին յառաջ կը քշայ, քիչ մը լէ օր յառէջ կիգան, մէկլէ կը տեսնին օր հանդա երկու ուր օրտուի ղտար մըր գեղից ասքար էլաւ ու կիգայ ուր յառէջ, մէկ սիպտակ մուքքով մարդ լէ թօփուզ մզրախ ի ձեռ, հեծեր արող ձիւ մի վըրէն, ասքրին յառէջ կը քաշայ, Աջմու խան արթէ ղուճանդար ար կը տեսնի օր եգոր հետ գըրխ չյեղնուի, կուրի լէ ուր ասքար կը ջարդուի, յետ կը դառնայ, էլի կերթայ Գաւօյի գեղի մօտ, Էտ օր յետ կը դառնայ, բող ձիւուր լէ զուր ասքար կը քաշայ կը մտնի մըր գեղ, Աջմու օրտուն երկու իրեք օր յիրարու վըրէն կիգայ դըրս (գէպի) մըր գեղ ու հըմեն անգամ լէ եգ բող ձիւուր մարդ յառէջ կյեղնի, Էն մէկ օր աջմներ մէկ մարդ մըր գեղէն հետիր (գերի) կը բռնին ու կը տանին ուրանց մեծաւորի մօտ, Խան եգոր կը հարցու թէ, եգ ի՞նչ ասքար ար եգոնք եգ խըտըր յուտից ին ձեր գեղի մէջ, Հայ շաշմիչ կեղնի (կշուարի) թէ գեղի մէջ ասքար որ տեղից ար Էդ մարդ երգումով ար հակեար ինչով ար աջմըներուն կաւտցու թէ գեղի մէջ ասքեար չկայ:

Խան էն սհաթ դըխու կընկնի, կիմնայ թէ բան ինչ տեղն ար եգ մարդուց կը հարցու թէ ձըր գեղի մէջ ինչ սուրբ կայ, հայն լէ կըսայ թէ—մէկ հին վանք կայ Ս. Ասուարածին անունով, Խան կիմնայ թէ ուր վըրէն գալոզն որն ար օւ էլ չիգայ վըր մըր գեղին, հմա էն տեղից շիտակ կերթայ վըր Մօլասըլէմանայ օր էն վախտ մըր գեղից լէ մեծ էր եղի:

Աջմներ մըր գեղի փուք վըր Մօլէսլէմանայ վըրէն կը թափին, տներ ինչ որ կայ չկայ, յմեն կը թաղնին ու կըքանդին, մարդիկ լէ որն որ կը փախնի սարեր ուրանց քուլթի (ընտանիք) հետ, որ լէ հետիր կընկնի աջմներու ձեռք, Էդ վախտ մըջ Մօլասլէմանայ մէկ ջըհէլ որբեվերի կնիկ կեղնի, եգի մինակ